

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY



FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department
of Romance and Germanic Philology, Yerevan State University,
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**
Doctor of Philology, professor of Moscow State University,
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**
Doctor of Philology, Institute of English Philology, Munich
University, Germany
- Charles Hall**
PhD, associate professor of Applied Linguistics, University of
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**
Dean of the Department of Romance and Germanic Philology,
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**
Head of Translation Chair,
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

Գլխավոր խմբագիր՝

Մարգարիտա Ապրեյան

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական
խորհրդի**

Դորա Մաքսյան

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

պատվավոր անդամներ՝

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

Սվետլանա Տեր-Մինասովա

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

Հանս Մաուեր

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի
համալսարան

Չարլզ Հոուլ

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Խմբագրակազմ՝

Մամվել Աբրահամյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Յուրա Գաբրիելյան

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Կարո Կարապետյան

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Ալբերտ Սակարյան

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

Ելենա Միխայրյան

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Համիկ Բաղդասարյան

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Avagyan N., Bagiryan D., Melkonyan R. THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES	8
Avetikian M. TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT	18
Абрамян С. ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА	30
Амирян Н. ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ	41
Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д. ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ)	50
Тер-Саргсян Л. ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА	67
ԱԹՈՅԱՆ Լ. ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ	78

Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 89

Գրիգորյան Շ.
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 101

Մարտիրոսյան Մ.
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 111

Մինասյան Է.
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ
ՄԱՄՈՒԼՈՒՄ 120

Սարգսյան Լ.
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ 134

Ոսկանյան Ա.
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 149

Սարգսյան Լ.
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ 162

ԼԵԶԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

ABSTRACT

SUPRA-SYNTACTIC REALIZATION OF LANGUAGE ECONOMY IN ENGLISH SCIENTIFIC DISCOURSE

Compression of information as the economy principle realization in discourse consists in the reduction of language units and maintenance of the general content of the message. It includes all the levels of linguistic structure. The given article is an attempt to elaborate on the idea that in English scientific discourse, compression often occurs through conveying implicit information at the supra-syntactic level, where various types of presuppositions, paralinguistic parameters of communication as well as different means of visual presentation of content such as diagrams and tables, carry out a major text-organizing function. The provisions developed as a result of the research have a major practical value and can be used in teaching English for academic purposes.

***Key words:** language economy, compression, English for Academic Purposes, supra-syntactic level, presupposition, paralinguistic parameter.*

РЕЗЮМЕ

ПРОЯВЛЕНИЕ ЯЗЫКОВОЙ ЭКОНОМИИ НА СВЕРХФРАЗОВОМ УРОВНЕ В АНГЛИЙСКОМ НАУЧНОМ ДИСКУРСЕ

Компрессия информации, как способ реализации принципа языковой экономии в речи, проявляется в виде сокращения языковых единиц и сохранения общего содержания сообщения, пронизывая все уровни языковой структуры. В настоящей статье выдвигается мнение о том, что в англоязычном научном дискурсе часто компрессия реализуется посредством имплицирования информации на уровне сверхфразового единства, где в качестве смыслообразующих элементов текста выступают пресуппозиции, паралингвистические параметры коммуникации, а также различные диа-

граммы, таблицы и прочие средства графического представления информации. Положения, разработанные в результате исследования, имеют важную практическую значимость и могут быть использованы в преподавании английского для академических целей.

Ключевые слова: языковая экономия, компрессия, английский для академических целей, сверхфразовой уровень, пресуппозиция, паралингвистический параметр.

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղեկատվության խտացումը՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացում խոսքում, դրսևորվում է լեզվական միավորների կրճատմամբ և ընդհանուր բովանդակության պահպանմամբ և ներառում է լեզվական համակարգի բոլոր մակարդակները: Սույն հոդվածում առաջ է քաշվում այն տեսակետը, որ անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խտացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերասույթային մակարդակում: Այստեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում կանխենթադրույթները, խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցները, ինչպես նաև գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները: Հետազոտության արդյունքում մշակված դրույթներն ունեն կարևոր կիրառական նշանակություն և կարող են օգտակար լինել ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակում:

Բանալի բառեր՝ լեզվական տնտեսում, խոսքում, ակադեմիական անգլերեն, վերասույթային մակարդակ, կանխենթադրույթ, հարալեզվական միջոց:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքային գործունեության ընթացքում խոսակիցների կողմից հաղորդակցական միջոցներ ընտրելու և դրանք համապատասխանաբար զուգակցելու հարցում կարևոր դեր է կատարում լեզվական տնտեսման սկզբունքը, որը ունի բավականին երկարատև հետազոտա-

կան պատմություն: Այս երևույթը դրսևորվում է լեզվի տարբեր հայեցակերպերում՝ հնչույթային, բառային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական: Ավանդաբար լեզվական տնտեսումը լուսաբանվել է տարածամանակյա հայեցակետով, մասնավորապես՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում լեզվի հնչյունական կազմի կրած փոփոխությունների մեկնաբանության լույսի ներքո: Ավելի ուշ շրջանի լեզվաբանության ուշադրության կենտրոնում առավել հաճախ հայտնվել են լեզվական տնտեսման սկզբունքի իրացման կոնկրետ միջոցները, որոնք, որպես կանոն, ուսումնասիրվել են նկարագրական լեզվաբանության դիրքերից: Ընդ որում, հաճախ նույնիսկ չի էլ գիտակցվել դրանց մեծ հաղորդակցական ներուժը և տեքստակազմիչ նշանակությունը: Սակայն վերջին շրջանի հետազոտությունները ցույց են տալիս, որ լեզվական տնտեսման միջոցները, թեև ձևի առումով սեղմ, բայց իմաստային առումով տարողունակ կառույցներ են: Այսինքն՝ դրանք թույլ են տալիս ձևավորել զանազան ներակա իմաստներ և կանխենթադրույթներ, որոնք միտված են արտահայտելու առավելագույն տեղեկատվություն լեզվական միավորների նվազագույն կազմով՝ ապահովելով մտքի կոռ և տրամաբանական կառուցվածք, հակիրճություն, տեղեկատվական հազեցվածություն, ժամանակի և տեղի տնտեսում և այլն: Թերևս դրանով է կարելի է բացատրել լեզվական տնտեսման միջոցների լայն կիրառությունը տարբեր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական խոսքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՅՈՒՄԸ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Ինչպես ցույց է տալիս կատարված հետազոտությունը, խտացումը դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունաբանությունից, վերջացրած իմաստաբանությամբ, ընդ որում՝ յուրաքանչյուր մակարդակում այն յուրօրինակ դրսևորում է գտնում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ընդունելով խտացման առկայությունը գրեթե

բուրք լեզվական մակարդակներում՝ տարբեր լեզվաբաններ տարբեր թվով մակարդակներ են առանձնացնում և խտացման տարբեր օրինակներ են բերում:

Այս ուղղությամբ մեծ աշխատանք են կատարել Ա.Պ. Վասիլևսկին և Յ.Մ. Էդմինսկին (Василевский, Эдмина, 1967: 37-38), որոնք առանձնացնում են խտացման դրսևորման հետևյալ վեց մակարդակները. 1. հնչույթաբանական կամ գրույթի մակարդակ (հնչույթի կամ գրույթի բացթողում), 2. ձևաբանական (հապավումների առաջացում), 3. շարահյուսական (նվազագույնս լիակառույց կաղապարների գործածություն), 4. բառային (տեքստում բառերի բացթողում), 5. շարահյուսական-բառային (սպասարկող և օժանդակ բառերի բացթողում) և 6. իմաստաբանական (տեղեկատվության պակաս կարևոր մասի բացթողում):

Ընդհանուր առմամբ ընդունելով Ա.Պ. Վասիլևսկու և Յ.Մ. Էդմինսկի դասակարգումը՝ հարկ ենք համարում շարահյուսական մակարդակի սահմաններում առանձնացնել նաև **տեքստային կամ վերաստույթային մակարդակը** և տեքստի շրջանակում կանխենթադրությունների հիման վրա տեղեկատվության որոշակի հատվածների ներակայումը կամ տեղեկատվությունը սեղմելու նպատակով որոշակի տեքստային հատվածների կրճատումը դիտարկել որպես խոսքի խտացման դրսևորում հենց այս մակարդակում: Բանն այն է, որ որքան էլ տեղեկատվության բացթողումը պայմանավորված լինի հաղորդման ընդհանուր իմաստային կառուցվածքով, բացթողնված կամ խտացման արդյունքում որպես ներակա ընկալվող տեղեկատվության վերականգնումը հնարավոր է միայն տեքստի՝ որպես կուռ ամբողջության հարթության վրա: Ըստ էության, առաջարկվող տեքստային կամ վերաստույթային մակարդակն ինչ-որ առումով մոտ է վերոնշյալ դասակարգման մեջ նշված իմաստաբանական մակարդակին: Սակայն ավելորդ ենք համարում, որպես այդպիսին, իմաստաբանական մակարդակի առանձնացումը, քանի որ, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, իմաստաբանական կամ տրամաբանական բնույթի հարաբերություններ նկատվում են նաև շարահյուսական մակարդակում: Այսպիսով՝ **լեզվական տնտե-**

սումը շարահյուսական մակարդակում հաճախ հանդես է գալիս տեղեկատվությունը սեղմ դարձնելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումների միջոցով, որոնց ուսումնասիրությունը գործաբանության դիրքերից կազմում է սույն ուսումնասիրության առարկան:

ՎԵՐԱՍՈՒՑԹԱՅԻՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՔՍԱԿԱԶՄԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խոսքի խտացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերասույթային մակարդակում, որտեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում **կանխենթադրույթները**: Ամփոփելով լեզվաբանության մեջ տարածված տեսակետերը՝ կարող ենք բնութագրել կանխենթադրույթները որպես նախնական գիտելիքներ, որոնք մասնակցում են ասույթի իմաստի ձևավորմանը՝ ստեղծելով պայմաններ դրա ճիշտ ընկալման համար (Knell, 2008; Blakemore, 2002; Gonzalez, 2000; Brown & Yule, 1983; Ostman, 1986; Chilton & Schaffner, 2002; Carston, 2008; Diessel, 2004; Fairclough, 2003): Առանձնացվում են տեքստային կանխենթադրույթները՝ այն նախնական գիտելիքները, որոնց սկզբնաղբյուրը հենց տեքստն է, կենցաղային կանխենթադրույթները՝ կյանքի տարրական իրողությունների իմացությունը, որն ընդհանուր է բոլոր լեզվակիրների համար, և հանրագիտարանային կանխենթադրույթները՝ գիտական (պատմական, աշխարհագրական, բնագիտական, տեխնիկական և այլն) և մշակութային բնույթի տեղեկությունների ամբողջությունը, որը հնարավոր է դարձնում տեքստի բաց թողնված, բայց վերականգնելի հատվածների ավելի խորը և ճիշտ ընկալումը (Yule, 2010; Grice, 1989; Мефедова, 1983):

Այսպես՝

...Well, right about the same time, around 1950, concerns developed about the loss of Southeast Asia. That's what led the United States into the Indochina wars...

...But the decline continues. In the last 10 years, there's been a very important event: the loss of South America. For the first time in 500 years, the South -- since the conquistadors, the South American countries have begun to move towards independence and a degree of integration...

...Well, moving on to just last year, the Arab Spring is another such threat. It threatens to take that big region out of the grand area. That's a lot more significant than Southeast Asia or South America.... (Ch.O.W.: 8:46-13:16)

Ն. Խոմսկու՝ Մասաչուսեթսի համալսարանում կարդացած դասախոսությունից վերցված այս հատվածում կարելի է գտնել տեքստի կանխենթադրույթների հիման վրա տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի մասի բացթողման օրինակ: Քանի որ ելույթ ունեցողը դասախոսության նախորդ հատվածներում հանգամանորեն անդրադարձել է Հարավարևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի կորստին, խոսելով Արաբական գարնան և Միջին Արևելքում ԱՄՆ վարած քաղաքականության մասին՝ պարզապես մեկ նախադասությամբ (...That's a lot more significant than Southeast Asia or South America...) թռուցիկ համեմատում է այն վերոնշյալ երկու տարածաշրջաններում ԱՄՆ ունեցած կորստի հետ՝ արտակա կերպով չնշելով տվյալ տարածաշրջաններում ԱՄՆ դիրքերի թուլացման, ազդեցության կորստի փաստի մասին, քանի որ վստահ է, որ ունկնդիրները հեշտությամբ նախորդող համատեքստից կվերականգնեն բաց թողնված տեղեկատվությունը: Այս կերպ՝ Ն. Խոմսկին, տնտեսելով լեզվական միջոցները և ներակա կերպով հաղորդելով տեղեկատվության որոշակի հատվածը, միաժամանակ տնտեսում է դասախոսությանը հատկացված ժամանակը, խուսափում է ավելորդ կրկնությունից՝ դրանով իսկ չնոցնեցնելով ունկնդիրներին և վերջիններիս ուշադրությունը հրավիրելով նոր տեղեկատվության, այն է՝ ԱՄՆ միջինարևելյան քաղաքականու-

թյան վրա: Ունկնդիրներն էլ իրենց հերթին, հենվելով տեքստի կանխենթադրույթների վրա, համարժեք կերպով վերականգնում են ներակա տեղեկատվությունը:

Good afternoon. My name is Uldus. I am a photo-based artist from Russia. I started my way around six years ago with ironic self-portraits to lay open so many stereotypes about nationalities, genders, and social issues — ["I am Russian. I sell drugs, guns, porno with kids!"] ["Vodka = water. I love vodka!"] (Laughter) — using photography as my tool to send a message. ["Marry me, I need a visa. "]. (B. W.Ph.T.S.: 0:11-0:40)

Տվյալ օրինակը լուսաբանում է կենցաղային կանխենթադրույթների դերը տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելու, ինչպես նաև ներակա տեղեկատվությունը վերականգնելու համարժեք ընկալելու հարցում: Ելույթ ունեցողը, ով ազգությամբ ռուս ֆոտոարվեստագետ է, ներկայացնում է իր կատարած աշխատանքը, որով փորձել է լուսանկարների միջոցով կոտրել ազգությունների, սեռերի, սոցիալական դերերի վերաբերյալ կարծրատիպերը: Ֆոտոարվեստագետը խոսքը սկսում է՝ ունկնդիրներին պատմելով, որ իր գործունեությունը սկսել է մոտ վեց տարի առաջ՝ ազգային, գենդերային և սոցիալական տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ կարծրատիպեր ներկայացնող ինքնալուսանկարներ անելով: Հնչող բանավոր խոսքին զուգահեռ մեծ էկրանին ցուցադրվում են այդ լուսանկարները, որոնցից մեկում պատկերված է էլույթ ունեցողը՝ ձեռքին մի ցուցանակ, որի վրա գրված է. «Օղի=Ջուր: Ես սիրում եմ օղի (Vodka = water. I love vodka!): Երկրորդ լուսանկարում էլույթ ունեցողը պատկերված է՝ ձեռքին «Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)» գրությունը: Տեսնելով այս լուսանկարներում պատկերված գրությունները՝ ողջ դահլիճը սկսում է ծիծաղել: Ի՞նչն է առաջացնում նրանց ծիծաղը. այն կարծրատիպերը, որ ամբողջ աշխարհն ունի ռուս ժողովրդի մասին, մասնավորապես՝ վերջիններիս մեծ սերը օղու նկատմամբ, որը, համաձայն տարածված կարծիքի, ռուսները խմում են այնքան հաճախ, որ դա համարվում է սովորական երևույթ, ինչպես

օրինակ՝ ջուր խմելը: Այս կարծրատիպը թույլ է տալիս վերականգնել տեքստի մակերեսային կառուցվածքից բաց թողնված հետևյալ տեղեկատվությունը. օդին ռուսների համար ջրի պես բան է, օրգանիզմի համար կենսական անհրաժեշտություն, առանց որի դժվար է պատկերացնել նրանց առօրյան: Այսպիսով՝ այս կարծրատիպը տվյալ դեպքում հանդես է գալիս կենցաղային կանխենթադրույթի դերում: Վերջինս ելույթ ունեցողին հնարավորություն է տալիս համապատասխան տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու և դրանով իսկ լեզվական միջոցներ տնտեսելու շնորհիվ հատուկ ոճական երանգավորում հաղորդել խոսքին և հումորային էֆեկտ ստեղծել: Երկրորդ լուսանկարում կենցաղային կանխենթադրույթի դերում հանդես է գալիս այն կարծրատիպը, որ հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ Ռուսաստանի քաղաքացիների համար ԱՄՆ վիզա ստանալու միջոց է ամուսնությունը ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձի հետ: Հետևաբար ելույթ ունեցողը, քաջ գիտակցելով, որ ունկնդիրների գիտակցության մեջ նույնպես արմատացած է այս կարծրատիպը, ինչպես նաև այն, որ վերջիններս գիտեն, որ լուսանկարում պատկերված է ինքը՝ ազգությամբ ռուս կին, այս մանրամասները արտակա կերպով իր խոսքում չի ներկայացնում՝ թողնելով ունկնդիրներին վերծանել երկու պարզ նախադասության (Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)) հետևում թաքնված այս տեղեկատվությունը: Դա թույլ է տալիս լեզվական միջոցների տնտեսմամբ խոսքն ավելի տպավորիչ, հումորով հարուստ, միևնույն ժամանակ տեղին ու ազդեցիկ դարձնել:

Այժմ դիտարկենք հանրագիտարանային կանխենթադրույթների դերը տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի հատված բաց թողնելու հարցում, ինչը բնորոշ է գիտական խոսքին:

Այսպես՝

In a few weeks, we'll be commemorating the 50th anniversary of "the most dangerous moment in human history." Now, those are the words of historian, Kennedy adviser, Arthur Schlesinger. He was referring, of course, to the October 1962 missile crisis, "the most dangerous moment in human

history." Others agree. Now, at that time, Kennedy raised the nuclear alert to the second-highest level, just short of launching weapons. He authorized NATO aircraft, with Turkish or other pilots, to take off, fly to Moscow and drop bombs, setting off a likely nuclear conflagration. (Ch. O. W.: 34:16-35:04)

Տվյալ օրինակում Ն. Խոմսկին անդրադարձ է կատարում 1962 թվականի հոկտեմբերին Կուբայում խորհրդային միջուկային հրթիռների տեղակայման առթիվ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև տեղի ունեցած 13-օրյա բախմանը, որը պատմության մեջ հայտնի է Կարիբյան (Կուբայի) ճգնաժամ անվամբ, երբ միայն հրաշքով Սառը պատերազմը չվերածվեց նոր համաշխարհային պատերազմի: Ելույթ ունեցողը, ենթադրելով, որ մարդիկ, ովքեր եկել են ունկնդրելու իր դասախոսությունը, բավարար չափով տիրապետում են պատմությանը, ունեն համապատասխան գիտելիքներ, հարկ չի համարում մանրամասնել, թե ինչ ասել է 1962 թվականի հոկտեմբերի հրթիռային ճգնաժամ: Դրա մասին գիտելիքն այս դեպքում հանդես է գալիս հանրագիտարանային կանխենթադրույթի դերում: Այն թույլ է տալիս ելույթ ունեցողին խնայել լեզվական միջոցներն ու ելույթին հատկացված ժամանակը և դրանով իսկ ունկնդիրների ուշադրությունը հրավիրել նոր ու ավելի կարևոր տեղեկատվության վրա:

ԽՈՍԱԿԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԱՑ ՀԱՐԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ՈՐՊԵՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆ

Անզլերեն գիտական դիսկուրսում բազմաթիվ են նաև օրինակները, որտեղ տեքստի խտացման հարցում որպես որոշիչ գործոն հանդես է գալիս իրադրությունը, որում տեղի է ունենում հաղորդակցությունը: Տվյալ դեպքում տեքստի խտացումը տեղի է ունենում տեղեկատվության այնպիսի հատվածների բացթողման շնորհիվ, որոնք հնարավոր է վերականգնել հաղորդակցության պահին հաղորդակցության մասնակիցներին շրջապատող առարկաների, ինչպես նաև խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցների՝ ժեստերի ու դիմախաղի միջոցով:

Առաջին դեպքում անզլերեն գիտական խոսքում հանդես եկող խոսացումը տեղի է ունենում աղյուսակների, գծապատկերների, նկարների և այլ տեսաձայնային միջոցների առկայության շնորհիվ, որոնք ամփոփ կերպով ներկայացնում են փաստական տվյալներ պարունակող այն տեղեկատվությունը, որը ամբողջական նախադասություններով արտահայտված լինելու դեպքում ոչ միայն անտեղի կլիներ խոսողի ժամանակը, այլև անհարկի կդժվարացներ դրա ընկալումը: Ինչպես հայտնի է, թվերով արտահայտված քանակական տվյալներն առավել մատչելի և ընկալելի են, երբ տեսանելի են և ներկայացված են համակարգված ձևով: Ի դեպ, տեղեկատվության խոսացման այս միջոցը հատուկ է ինչպես գրավոր գիտական տեքստերին, այնպես էլ բանավոր ելույթներին: Դիտարկենք հետևյալ օրինակը.

And that's something the oceans have been doing for us for a long time. As far back as we can go, we've seen an increase in the amount of food we've been able to harvest from our oceans. It just seemed like it was continuing to increase, until about 1980, when we started to see a decline. You've heard of peak oil. Maybe this is peak fish. I hope not. I'm going to come back to that. But you can see about an 18-percent decline in the amount of fish we've gotten in our world catch since 1980. And this is a big problem. It's continuing. This red line is continuing to go down... (S.S.O.F.W.: 1:30-2:04)

Այս օրինակը բանավոր ելույթից է, որի ժամանակ խոսողը ներկայացնում է ձկնային պաշարների քանակական փոփոխության պատմությունը՝ բանավոր խոսքն ուղեկցելով էկրանին ցուցադրվող գծապատկերով: Նա իր խոսքում նշում է, որ մինչև 1980 թվականը ձկնային պաշարները շարունակում էին աճել, որից հետո սկսում են քանակապես անկում ապրել: Սակայն բանավոր խոսքում չեն նշվում քանակական աճի և նվազման կոնկրետ ցուցանիշները՝ արտահայտված թվերով՝ ըստ տարեթվերի, որոնք, փոխարենը, ունկնդիրները տեսնում են էկրանին պատկերված գծապատկերի վրա: Բացի այդ, աճը ցույց տվող կորը գծապատկերի վրա նշված է կապույտ գույնով, իսկ նվազումը պատկերողը՝ կարմիրով, և խոսքի ընթացքում ելույթ ունեցողը, անդրա-

դառնալով ձկնային պաշարների քանակական անկմանը, նշում է. «...Այս կարմիր գիծը շարունակում է իջնել...»: Գծապատկերին նայելով՝ ունկնդիրները միանգամից հասկանում են, թե խոսքն ինչի մասին է, ինչը թույլ է տալիս ելույթ ունեցողին խուսափել ավելորդ ժամանակ և լեզվական միջոցներ վատնելուց:

Ժեստերը և դիմախաղը գրեթե միշտ ուղեկցում են բանավոր խոսքին՝ իրենց ուրույն մասնակցությունն ունենալով իմաստաստեղծման գործընթացին, ինչը դրսևորվում է դրանց իրականացրած տարբեր գործառույթների միջոցով: Մասնավորապես՝ դրանք խոսքին հաղորդում են արտահայտչականություն, իրականացնում են բացատրական և նկարագրական գործառույթ, ինչպես նաև փոխարինում են լեզվական տարրերին՝ այդպիսով հանդես գալով որպես լեզվական տնտեսման միջոց: Այս վերջին գործառույթով դրանք տեղեկատվությունը ներակա կերպով ներկայացնելու միջոցով հաճախ նպաստում են տեքստի խտացմանը:

Այսպես՝

...You know, when the telephone arrived people did not know how to deal with it. They didn't know what to say /DC gestures as if picking up the phone/: when they picked up the phone /DC gestures as if picking up the phone/ they would shout and say, "Who is that? Are you there?", and so on. Today we just go /DC gestures as if picking up the phone again/ "Hello!" or we give the telephone number /again DC gestures as if picking up the phone/ or whatever it is... (C.E.N.T.E.: 1:03-1:19)

Տվյալ օրինակը, որը Դեյվիդ Քրիսթալի՝ անգլերենի վրա նորագույն տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ ելույթից է, լուսաբանում է, թե ինչպես կարող է խոսողի մեկ ժեստը փոխարինել մի ամբողջ ասույթի: Խոսելով հեռախոսի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մասին, երբ այն նոր-նոր էր գործածության մեջ մտել, Դեյվիդ Քրիսթալն ասում է. «Սկզբում մենք չգիտեինք՝ ինչ ասել»: Եվ ձեռքով շարժում է անում՝ իբր վերցնում է հեռախոսը՝ այսպիսով ընդամենը մեկ շարժումով «ասելով»՝ երբ վերցնում էինք խոսափողը: Այնուհետև շարունակում

է՝ ասելով. «Իսկ այսօր մենք պարզապես ասում ենք՝ ալո (Today we just go “Hello!”): Միաժամանակ ձեռքով անում է նույն՝ երևակայական խոսափողը վերցնելը պատկերող շարժումը՝ դրանով իսկ, առանց խոսքային միջոցներ գործածելու, դահլիճում ներկա գտնվողներին «ասելով». «...Իսկ այսօր մենք խոսափողը վերցնում ենք և պարզապես ասում՝ ալո»: Այսպիսով՝ խոսողը տնտեսում է լեզվական միջոցները ժեստերի օգնությամբ խոսքի ձևականորեն արտահայտված կառուցվածքից ամբողջական նախադասություններ, հետևաբար և դրանցով հաղորդվող արտակա տեղեկատվություն բաց թողնելու միջոցով: Դա ծառայում է մի քանի նպատակի՝ խուսափել անհարկի կրկնությունից, դրանով իսկ արտահայտչականություն հաղորդել խոսքին, խնայել ժամանակը՝ հնարավորինս կարճ խոսելով և, որպես վերջնարդյունք, ելույթը տպավորիչ և հետաքրքիր դարձնել դահլիճում հավաքվածների համար:

The internet arrives not so long ago. You, guys, here, most of you have never known a world without the internet, those of us who are slightly less young /DC gestures to point to himself and the man who hosts the talk/ well remember a world without the internet... (C.E.N.T.E.: 2:20-2:35)

Այս օրինակում, խոսելով այն մասին, որ, ի տարբերություն նրանց, ովքեր համեմատաբար ավելի տարիքով են, երիտասարդները չեն պատկերացնում աշխարհն առանց համացանցի, Դեյվիդ Քրիսթալը «...ովքեր համեմատաբար ավելի տարիքով են... (...those of us who are slightly less young...)» արտահայտությունն արտաբերելիս ձեռքով շարժում է անում՝ մատնանշելով իրեն և ուսանողների հետ հանդիպումը վարողին, ով իր հասակակիցն է: Այդպիսով՝ խոսողը առանց լեզվական միջոցների ճշգրտում է, թե «համեմատաբար ավելի տարիքով» ասելով՝ ում նկատի ունի: Մրանով խոսողը ոչ միայն խուսափում է ավելորդ, անհարկի ասույթի գործածությունից, այլև ավելի արտիստիկ ու անմիջական է դարձնում իր ելույթը և դրա միջոցով տեղի ունեցող շփումն ուսանողների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վերասույթային մակարդակում տեքստը սեղմելու առանձնահատկությունների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անգլերեն գիտական խոսքում նշված մակարդակում լեզվական տնտեսման միջոցի դեր հաճախ կատարում են խոսքնկերների՝ տեքստային, կենցաղային և հանրագիտարանային կանխենթադրույթների տեսքով հանդես եկող համատեղ գիտելիքը, գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները, ինչպես նաև (բանավոր խոսքի դեպքում) խոսողի կիրառած հարալեզվական միջոցները: Դրանք, ծառայելով տեքստի շրջանակներում տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելուն և ներակա տեղեկատվությունը համարժեք կերպով վերականգնելուն, **իրականացնում են տեքստակազմիչ գործառույթ:**

Աշխատանքի արդյունքներն ունեն կիրառական արժեք և կարող են օգտակար լինել ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակներում, անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, գիտական թեմաներով անգլերեն լեզվով ելույթներ պատրաստելիս և հայերենից անգլերեն գիտական թարգմանություններ կատարելիս: Այլ կերպ՝ դրանք կնպաստեն գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Blakemore D.** (2002), *Relevance and Linguistic Meaning: The Semantics and Pragmatics of Discourse Markers*. Cambridge: Cambridge University Press, 200 p.
2. **Brown G., Yule G.** (1983), *Discourse Analysis*. Cambridge: Cambridge University Press, 283 p.
3. **Carston R.** (2008), *Thoughts and Utterances: the Pragmatics of Explicit Communication*. USA: John Walley and Sons, 432 p.
4. **Chilton P.A., Schaffner Ch.** (2002), *Themes and Principles in the Analysis of Political Discourse // Politics as Text and Talk: Analytic Approaches to Political Discourse*. USA: John Benjamins Publishing, pp. 1-44.

5. **Diessel H.** (2004), *The Acquisition of Complex Sentences*. Cambridge: Cambridge University Press, 226 p.
6. **Fairclough N.** (2003), *Analysing Discourse: Textual Analysis for Social Research*. New York: Routledge, 270 p.
7. **Gonzalez T.** (2000), *Implicitness and Ideology // Talk and Text: Studies on Spoken and Written Discourse*. Spain: Univ De Castilla La Mancha, pp. 79-96.
8. **Grice H.P.** (1989), *Studies in the Way of Words*. Harvard: Harvard University Press, 406 p.
9. **Knell S.** (2008), *A Deflationist Theory of Intentionality // The Pragmatics of Making it Implicit*. Philadelphia: John Benjamins Publishing, pp. 65-82.
10. **Ostman J.O.I.** (1986), *Pragmatics as Implicitness: an Analysis of Question Particles in Solf Swedish, with Implications for the Study of Passive Clauses and the Language of Persuasion*. USA: University of California, Berkeley, 696 p.
11. **Yule G.** (2010), *The Study of Language*. Cambridge: Cambridge University Press, 320 p.
12. **Василевский А.Л., Эдмина М.О.** (1967), *О компрессии речи на разных уровнях // Уровни языка и их взаимодействия*. Москва: Изд-во МГПИИЯ им. М.Тореза, сс. 33-38.
13. **Нефедова Л.А.** (1983), *Эллипсис в акте коммуникации*. Москва: МГУ, 24 с.

ՀԱՄԱՅԱՆՑԻ ՀՂՈՒՄՆԵՐ

1. B.W.Ph.T.S. - Bakhtiozina U. *Wry Photos That Turn Stereotypes Upside Down*. Ted2014, filmed March 2014. Available at https://www.ted.com/talks/uldus_bakhtiozina_wry_photos_that_turn_stereotypes_upside_down, accessed 15 September 2014.
2. C.E.N.T.E. - Crystal D. *The Effect of New Technologies on English*, published on 29 Nov 2013. Available at <https://www.youtube.com/watch?v=qVqcoB798Is>, accessed 1 March 2015.
3. Ch.O.W. - Chomsky N. *Who Owns the World*, delivered at the University of Massachusetts at Amherst, September 2012. Available at https://www.youtube.com/watch?v=_9CHtm2qK2g, accessed 19 September 2014.
4. S.S.O.F.W. - Savitz J. *Save the Oceans, Feed the World*. TedxMidAtlantic 2013, filmed October 2013. Available at https://www.ted.com/talks/jackie_savitz_save_the_oceans_feed_the_world/transcript?language=en#t-28016, accessed 14 August 2014.